ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1655-Ա

«ՎԱՀԱԳՆ ՍԱՖԱՐՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 15-ի N175-Ն որոշումը, ինչպես նաև «Վահագն Սաֆարյան» անհատ ձեռնարկատիրոջ 2025 թվականի հուլիս 1-ի դիմումը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Վահագն Սաֆարյան» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2025 թվականի ընթացքում Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրի 1-ին փողոց 68 հասցեում (մինչև 280 քառակուսի մետր) ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրատեսակների վաճառքի թույլտվություն:

2. «Վահագն Սաֆարյան» անհատ ձեռնարկատերը պարտավոր է 2025 թվականի ընթացքում ոգելից և ալկոհոլային խմիչքի իրացման թույլտվության համար Մեծամորի համայնքապետարանի 9900335006731 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում թույլտվության համար սահմանված տեղական տուրքի վճարը կատարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 28
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1654-Ա

«ՎԱՀԱԳՆ ՍԱՖԱՐՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 15-ի N175-Ն որոշումը, ինչպես նաև «Վահագն Սաֆարյան» անհատ ձեռնարկատիրոջ 2025 թվականի հուլիսի 1-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Վահագն Սաֆարյան» անհատ ձեռնարկատիրոջ տալ 2025 թվականի ընթացքում Մեծամոր համայնքի Նալբանդյան բնակավայրում (մինչև 280 քառակուսի մետր) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:

2. «Վահագն Սաֆարյան» անհատ ձեռնարկատերը պարտավոր է 2025 թվականի ընթացքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար Մեծամորի համայնքապետարանի 900335006780 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում թույլտվության համար սահմանված տեղական տուրքի վճարը կատարելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 28
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1653-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N828-Ն, 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշումներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքում Մեծամոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող Մեծամոր քաղաքի 4-րդ թաղամաս, 1-ին նրբանցք, 4-րդ հասցեում գտնվող 0,06659 հա /կադաստրային ծածկագիր 04-003-0056-0046-ից/ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասի հողատեսքը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2. Փոփոխված հողամասը ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 28
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1652-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՏԱՆԻՍԼԱՎ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Ստանիսլավ Կարապետի Գրիգորյանի կողմից լիազորված անձ Վալերի Արմենի Հայրապետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում Ստանիսլավ Կարապետի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 041925A748XU, կադ. ծածկագիր՝ 04-067-0156-0002/ տրամադրել հասցե՝ Մեծամոր համայնք, Մրգաշատ բնակավայր,1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 15 հողամաս:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ստանիսլավ Կարապետի Գրիգորյանի կողմից լիազորված անձ՝ Վալերի Արմենի Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 28
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1651-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԹՈՒՐ ԹԵԼՄԱՆԻ ՂՈՒՄԱՇՅԱՆԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով, Մեծամոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 2-ի N 7 որոշման 15-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի 11 փ., 3 փկղ., 5 տան հասցեի բնակիչ Արթուր Թելմանի Ղումաշյանի (ծնվ.24.01.1971թ. անձ.AV0600482) ընտանիքին հատկացնել դրամական օգնություն 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ բժշկական օգնության և սպասարկման ծախսերը հատուցելու նպատակով:

2. Նշված 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը փոխանցել «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ի հաշվեհամարին 1150020655025010:

3. Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Նոնա Հակոբյանին կատարել համապատասխան ձևակերպում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 28
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2025 թվականի N 1650-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 28-ին «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արմավիր գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արմավիր գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արմավիր գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի պահանջների համաձայն:

3. Հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի

կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր 2.3-9)՝ Վալենտինա Բաղդասարյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել մրցույթի անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրում և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրում է նիստերի արձանագրությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 28
ք.Մեծամոր

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ղեկավարի 2025 թվականի
օգոստոսի 28-ի N 1659-Ա որոշմամբ

ԿԱՋՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ/Հ	Անուն,ազգանուն,	Զբաղեցրած պաշտոնը	Որ կազմակերպությունն է ներկայացնում
1	Արշակ Ղորղանյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
2	Նարեկ Ղուկասյան	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության ավագ մասնագետ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
3	Բենիկ Ստեփանյան	Մեծամորի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ	Մեծամորի համայնքապետարան
4	Տատյանա Դոբոյան	Մեծամոր համայնքի ավագանու անդամ	Մեծամոր համայնքի ավագանի

5	Արմինե Մարգարյան	Մեծամոր համայնքի «Մշակույթի տուն և գրադարան» ՀՈԱԿ-ի տնօրեն	Մեծամոր համայնքի «Մշակույթի տուն և գրադարան» ՀՈԱԿ

Աշխատակազմի քարտուղար Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2025 թվականի N 1649-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի N 1608-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Մեծամոր համայնքի ղեկավարի 2025 թվականիօգոստոսի 15-ի «Համայնքի վարչական տարածքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» N 1608-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 26
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2025 թվականի N 1648-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի բնակիչ՝ Մանյա Սարգսի Մարտիրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի, 3-րդ փողոց, 57 բնակելի տան հասցեում գտնվող փաստացի 0,09449 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1968 թվականին կառուցված 97,50 ք/մ բնակելի տան, 1968 թվականին կառուցված 15,96 ք/մ բնակելի տան, 1968 թվականին կառուցված 4,65 ք/մ աստիճանի, 1972 թվականին կառուցված 68,85 ք/մ ծածկոցի նկատմամբ Մանյա Սարգսի Մարտիրոսյանի /ծնված 20.01.1953թ./ և Նառա Շուռայի Առաքելյանի /ծնված 08.12.1981թ./ սեփականության իրավունքը:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Մանյա Սարգսի Մարտիրոսյանի /ծնված 20.01.1953թ./ և Նառա

Շուռայի Առաքելյանի /ծնված 08.12.1981թ./ սույն որոշման 1-ին կետում նշված Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի, 3-րդ փողոց, 57 բնակելի տան հասցեում գտնվող փաստացի 0,17800հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 1968 թվականին կառուցված 97,50 ք/մ բնակելի տան, 1968 թվականին կառուցված 15,96 ք/մ բնակելի տան, 1968 թվականին կառուցված 4,65 ք/մ աստիճանի, 1972 թվականին կառուցված 68,85 ք/մ ծածկոցի նկատմամբ սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. Օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 0,00449 հա /կադաստրային ծածկագիր՝ 04-075-0041-0017/ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Մանյա Սարգսի Մարտիրոսյանին /ծնված 20.01.1953թ./ և Նառա Շուռայի Առաքելյանին /ծնված 08.12.1981թ./:

4. 2014 թվականին կառուցված 19,88 ք/մ անասնաշենքը համարել որպես ինքնակամ կառուցված շինություն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մանյա Սարգսի Մարտիրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 26
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2025 թվականի N 1647-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքին պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04011HVRXMYV կադ. ծածկագիր՝ 04-003-0056-0046-ից/ տրամադրել հասցե՝ Մեծամոր համայնք, Մեծամոր քաղաք, 4-րդ թաղամաս, 1-ին նրբանցք, 4 տարածք:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 26
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թվականի N 1646-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՉՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրություն.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետի կողմից 2025 թվականի օգոստոսի 06-ին կազմված թիվ 12 արձանագրության համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տարոնիկ բնակավայրի Տիգրան Մեծ փողոցի թիվ 1 տան բնակիչ Վարդան Վարդանյանը չի մարել փոխադրամիջոցի գույքահարկի մասով հարկային պարտավորությունները, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Մեծամոր համայնքի ղեկավարի կողմից՝ 2025 թվականի օգոստոսի 07-ին կայացվել է թիվ 1563-Ա որոշումը՝ քաղաքացի Վարդան Վարդանյանի նկատմամբ վարչական վարույթ հարուցելու մասին:
«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետի կողմից 2025 թվականի օգոստոսի 06-ին կազմված թիվ

12 արձանագրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տարոնիկ բնակավայրի Տիգրան Մեծ փողոցի թիվ 1 տան բնակիչ Վարդան Վարդանյանին պատկանող փոխադրամիջոցի գույքահարկի գծով՝ 2025 թվականի օգոստոսի 06-ի դրությամբ հաշվարկված և չմարված հարկային պարտավորությունը կազմում է՝ 2.422.783 /երկու միլիոն չորս հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամ:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա Մեծամորի համայնքապետարանում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող» հանձնաժողովի կողմից 2025 թվականի օգոստոսի 18-ին ժամը 11:30-ին հրավիրվել են վարչական վարույթով գործի լսումներ: Քաղաքացի Վարդան Վարդանյանը «Հայփոստ» ՓԲ ընկերության միջոցով ծանուցվել է վարչական վարույթի լսման օրվա, ժամի և տեղի մասին /ստացական՝ LO129054169AM/, «Հայփոստ» ՓԲԸ-ից ստացված հետադարձ ծանուցագրի համաձայն՝ քաղաքացի Վարդան Վարդանյանը ծանուցումը ստացել է՝ 2025 թվականի օգոստոսի 15-ին, սակայն չի ներկայացել վարչական վարույթով գործի քննությանը:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:
«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ:
«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:
«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:
ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարող կամ հարկային գործակալը վճարում է տույժ:
Այսպիսով, քաղաքացի Վարդան Վարդանյանը հանդիսանալով հարկ վճարող սուբյեկտ, օրենքով սահմանված կարգով չի վճարել իրեն պատկանող փոխադրամիջոցի գույքահարկը, ինչի հետևանքով մինչև 2025 թվականի օգոստոսի 06-ի դրությամբ հաշվարկված և չմարված փոխադրամիջոցի գույքահարկի գծով

հարկային ամբողջ պարտավորությունը կազմել է 2.422.783 /երկու միլիոն չորս հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամ:
Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 26–րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-61-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Վարդան Վարդանյանից հօգուտ Մեծամոր համայնքի բյուջեի գանձել 2.422.783 /երկու միլիոն չորս հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամ վճարման ենթակա գույքահարկի գումար:

2. Քաղաքացի Վարդան Վարդանյանից հօգուտ Մեծամոր համայնքի բյուջե գանձման ենթակա 2 . 422 . 783/երկու միլիոն չորս հարյուր քսաներկու հազար յոթ հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ 900325189026 հաշվեհամարին /փոխադրամիջոցի գույքահարկի համար/:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Դրամական պահանջները չկատարելու դեպքում սույն որոշումը կներկայացվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով Մեծամոր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 25
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թվականի N 1645-Ա

ՎԱՀՐԱՄ ԱՐՏԱՇԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ԱՐՄԻՆԵ ԴԵՐԵՆԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՑԱԾՐԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 25.01.2021թ. թիվ ՄՈ/28-2021 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 21.08.2025թ. թիվ 17 նիստի եզրակացությունը և Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի բնակիչ Վահրամ Սարգսյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի բնակիչներ Վահրամ Արտաշեսի Սարգսյանին, Արմինե Դերենիկի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 04-067-0445-0025/ 0,5082 հա հողամասի բարձրարժեք հողատեսք՝ 2-րդ կարգի խաղողի այգին փոխադրել ցածրարժեք հողատեսքի՝ որպես վարելահող:

2. 2025 թվականի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահրամ Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 25
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թվականի N 1644-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻՏԱԼ ՇԻՐԻՆԻ ՈՒԶՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Տիտալ Շիրինի Ուզոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրում Տիտալ Շիրինի Ուզոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր 041526TAL6BE, կադ. ծածկագիր՝ 04-040-0024-0007 տրամադրել հասցե՝ Մեծամոր համայնք Երասխահուն բնակավայր, 26-րդ փողոց, 12 բնակելի տուն:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տիտալ Շիրինի Ուզոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 25
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թվականի N 1643-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒԲԵՆ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Ռուբեն Մնացականի Հարությունյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Մեծամոր համայնքի Ջանֆիդա բնակավայրում Ռուբեն Մնացականի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04262RMDPESD, կադ. ծածկագիր՝ 04-083-0041-0017/ տրամադրել հասցե՝ Մեծամոր համայնք, Ջանֆիդա բնակավայր, 42-րդ փողոց, 3 հողամաս:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռուբեն Մնացականի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼՅԱՍՏՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 25
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թվականի N 1642-Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐԻ ԳԵՆԵՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՑԱԾՐԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 25.01.2021թ. թիվ ՄՈ/28-2021 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի 21.08.2025թ. թիվ 17 նիստի եզրակացությունը և Մեծամոր համայնքի Բերքաշատ բնակավայրի բնակիչ Հովհաննես Գենեջյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Բերքաշատ բնակավայրի բնակիչ Հովհաննես Գրիգորի Գենեջյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 04-032-0112-0005/ 0,98 հա հողամասի բարձրարժեք հողատեսք՝ 3-րդ կարգի խաղողի այգին փոխադրել ցածրարժեք հողատեսքի՝ որպես վարելահող:

2. 2025 թվականի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Գենեջյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2025 թվականի օգոստոսի 25
ք.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
գ.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թվականի N 1641-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՏՈԼԻԿ ՍՈՒՏՈՅԻ ՈՒՍՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Տոլիկ Սուտոյի Ուսոյանի կողմից որպես լիազորված անձ՝ Դիանա Ստեփանի Երիցփոխովայի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում Տոլիկ Սուտոյի Ուսոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 041923YPHK8Q, կադ. ծածկագիր՝ 04-067-0143-0008/ տրամադրել հասցե՝ Մեծամոր համայնք, Մրգաշատ բնակավայր, 6-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 32 հողամաս:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տոլիկ Սուտոյի Ուսոյանի կողմից որպես լիազորված անձ՝ Դիանա Ստեփանի Երիցփոխովային որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 25
գ.Մեծամոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ք.Մեծամոր, 060900303 info.metsamor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025 թվականի N 1640-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ Արմավիր մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրի բնակիչ Տոլիկ Սուտոյի Ուսոյանին /ծնված 05.11.1967թ./ սեփականության իրավունքով պատկանող 0,12 հա օրինական բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի փաստացի չափը կազմում է 0,1440 հա, հողամասին կից ավել զբաղեցրած 0,024 հա հողը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի խախտում անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 0,024 հա /կադաստրային ծածկագիր՝ 04-067-0143-0008/ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Տոլիկ Սուտոյի Ուսոյանին /ծնված 05.11.1967թ./, Կարինե Ամարի Սուլեյմանովային /ծնված 15.09.1969թ./, Մարինե Տոլիկի Ուսոյանին /ծնված 05.08.1989թ./ և Մանվել Տոլիկի Ուսոյանին /ծնված 24.09.1990թ./:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Տոլիկ Սուտոյի Ուսոյանի /ծնված 05.11.1967թ./, Կարինե Ամարի Սուլեյմանովայի /ծնված 15.09.1969թ./, Մարինե Տոլիկի Ուսոյանի /ծնված 05.08.1989թ./ և Մանվել Տոլիկի Ուսոյանի /ծնված 24.09.1990թ./ սեփականության

իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տոլիկ Սուտոյի Ռաֆայանի կողմից որպես լիազորված անձ՝ Դիանա Ստեփանի Երիցփոխովային որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2025 թվականի օգոստոսի 25
ք.Մեծամոր